



California's protection & advocacy system

Վաղ մեկնարկի կանոններ՝ Մասնավոր ապահովագրություն օգտագործելու վերաբերյալ

*2018 թվականի դեկտեմբեր, Հրատարակություն թիվ
7140.10 - Armenian*

Նահանգի օրենսդրական մարմինը պահանջեց, որպեսզի Չարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությունը (DDS) կրճատի իր անցած տարիների բյուջեն: Արդյունքում, Վաղ մեկնարկի (վաղ միջամտության) շրջանային կենտրոնների կողմից գնվող ծառայություններում և կենտրոնների գործելակերպում փոփոխություններ են իրականացվել:

Այս հրատարակությունը նկարագրում է Վաղ մեկնարկի ծառայությունների համար մասնավոր ապահովագրություն օգտագործելու մասին օրենքում փոփոխությունները: Այն ներառում է փոփոխություն, ըստ որի ընտանեկան ծառայության անհատականացված պլանավորման թիմը, մշակման փուլում կարող է ներառել ընտանեկան ծառայության անհատական ծրագրի (ԸԾԱԾ) պլանավորված վերանայում կամ ձևափոխություն, սահմանում առ այն, որ ԸԾԱԾ-ում որոշված բժշկական ծառայությունը հասանելի չէ ընտանիքի բժշկական ապահովագրության մասնավոր ծրագրով և հետևաբար, կֆինանսավորվի շրջանային կենտրոնի կողմից: Այս օրենքն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունիսի 27-ին:¹

¹Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4646.4(ա)(2)
([ՎԵՐԱԴՂԱՌՆԱԿ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

Մասնավոր ապահովագրությունն օգտագործելը

2012 թվականին փոփոխվել է պայմանուևակ նորածնի կամ փոքր տարիքի երեխաների ԸԾԱԾ-ում նույնականացված բժշկական կամ առողջապահական ծառայության համար մասնավոր ապահովագրության օգտագործելու վերաբերյալ օրենքը՝ այն պայմանի, որ մասնավոր բժշկական ապահովագրության օգտագործելը չպետք է.²

- 1) Հաշվի առնվի կամ հանգեցնի անկարողությունն ունեցող անձի կամ ընտանիքի ընգրկված այլ անդամի նպաստների կորստին՝ տարեկան կամ մշտական առավելագույն սահմանի պատճառով, կամ
- 2) Բացասաբար ազդի անկարողությունն ունեցող անձի կամ ընտանիքի ընգրկված այլ անդամի համար մասնավոր ապահովագրության առկայությանը կամ հանգեցնի դրա դադարեցմանը, կամ
- 3) Անկարողությունն ունեցող անձի կամ ընտանիքի ընգրկված այլ անդամի համար մասնավոր ապահովագրության ապահովագրավճարի ավելացման հիմք լինի:

Դաշնային օրենքով սովորաբար շրջանային կենտրոնին ծնողական համաձայնությունն է հարկավոր՝ ծնողի մասնավոր ապահովագրությունը վաղ միջամտության ծառայությունների դիմաց վճարելու համար օգտագործելու համար:³ Այնուամենայնիվ, դաշնային օրենքով ծնողի մասնավոր ապահովագրությունն օգտագործելու համար շրջանային կենտրոնին ծնողական համաձայնությունն հարկավոր չէ, եթե նահանգը կիրառել է նահանգային ապահովագրության մասին օրենք, որը ծնողներին պաշտպանում է այն բացասական ֆինանսական հետևանքներից, որոնց ազդեցությունը նրանք հակառակ դեպքում կկրեին իրենց մասնավոր ապահովագրական ընկերության կողմից՝

² Կառավարության օրենքի բաժին 95004(գ)([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

³ 34 Դաշնային օրենսգրքի բաժին 303.520(բ)(1): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

շրջանային կենտրոնի կողմից մասնավոր ապահովագրության վճարների օգտագործման պատճառով:⁴ Զանի որ Կալիֆորնիա նահանգն ընդունել է ծնողներին այս երեք հնարավոր հետևանքներից պաշտպանող օրենքը, ապա ծնողական համաձայնությունն այլևս չի պահանջվում: Շրջանային կենտրոնին հասանելի են ծնողի մասնավոր ապահովագրության նպաստները՝ երեխայի համար վաղ միջամտության ծառայությունների դիմաց վճարելու համար:⁵

Մասնավոր ապահովագրության՝ բժշկական ծառայությունների ծածկույթի որոշում՝ ժամանակին մատուցվող ծառայություններ ապահովելու համար

Երբ շրջանային կենտրոնը փորձում է օգտվել մասնավոր բժշկական ապահովագրությունից՝ վաղ միջամտության ծառայությունները ֆինանսավորելու համար, այն կարող է հետաձգել երեխայի կողմից անհրաժեշտ ծառայություններ ստանալը: Նոր օրենքը խրախուսում է պլանավորման թիմերին ԸԾԱԾ-ի մշակման, վերանայման կամ ձևափոխության ժամանակ սահմանել, արդյոք ԸԾԱԾ-ում նույնականացված բժշկական ծառայությունը հասանելի կլինի ընտանիքի մասնավոր բժշկական ապահովագրության ծրագրի

⁴ 34 Դաշնային օրենսգրքի բաժին 303.520(բ)(2): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

⁵ Չնայած դրան Չարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությունն (DDS) ունի կարգավորում, որն ընդունվել է 2003 թվականին (Կալիֆորնիա նահանգի օրենսգրքի 17-րդ գլուխ 52109(գ)), համաձայն որի ծնողների մասնավոր ապահովագրության օգտագործումը տարածաշրջանային կենտրոնների կողմից՝ վաղ միջամտության ծառայությունների համար կարող է կամավոր լինել, որ կարգավորումն այլևս վավեր չէ այնքանով, որքանով այն հակասում է Կառավարության օրենսգրքի 95004(բ)(1) բաժնին, ըստ որի ԸԾԱԾ-ում բժշկական ծառայությունների համար մասնավոր բժշկական ապահովագրությունը, որը ծառայում է բացի գնահատումից այլ նպատակների, պետք է օգտագործվի կիրառելի դաշնային և նահանգային օրենսդրությանը և կարգավորումներին համապատասխան: ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

միջոցով:⁶ Եթե սահմանվի, որ բժշկական ծառայությունը չի ֆինանսավորվում ընտանիքի մասնավոր բժշկական ապահովագրության ծրագրի միջոցով, շրջանային կենտրոնը պետք է ֆինանսավորի ծառայությունը առանց ձգձգման՝ համաձայն ծառայությունների արագ մատուցման պայմանի:⁷

Ծնողները պաշտպանված են հնարավոր հետևանքներից

Եթե ծնողը կրում է ապահովագրավճարների, համավճարների կամ մասհանումների հետ կապված ծախսեր, այդ ծախսերը պետք է ներառված լինեն վաղ միջամտության ծառայությունների համար ընտանեկան վճարումների համակարգում, որը պետք է ընդունի նահանգը:⁸ Քանի որ Կալիֆորնիա նահանգը դեռևս չի ընդունել վաղ միջամտության ծառայությունների դիմաց ընտանիքների կողմից նահանգային վճարումների համակարգ, ծնողը պատասխանատու չէ վճարելու համար այն մասհանումների կամ համավճարների համար, որոնք կապված են երեխայի վաղ միջամտության ծառայությունների դիմած մասնավոր ապահովագրություն օգտագործելու՝ շրջանային կենտրոնին տրվող համաձայնության հետ: Ծնողները պետք է ներառեն վաղ միջամտության ծառայությունների դիմած ծնողների մասնավոր ապահովագրությունը շրջանային կենտրոնի կողմից օգտագործելու համաձայնության և երեխայի ԸԾԱԾ-ի մեջ ներառեն հավաստիացում շրջանային կենտրոնի կողմից, որ այն կվճարի կամ կփոխհատուցի ծնողներին այն մասհանումների կամ համավճարների համար, որոնք գանձվել են առողջապահական ծառայություններ մատուցողների

⁶ Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4646.4(ա)(2): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

⁷ Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4646.4(ա)(2). Կառավարության օրենսգրքի բաժին 95004(բ)(2). 34 Դաշնային օրենսգրքի բաժին 303.511(դ)(1): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

⁸ 34 Դաշնային օրենսգրքի բաժին 303.520(բ)(1)(ii): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

կողմից՝ առողջապահական վաղ միջամտության ծառայություններ մատուցելիս:

Եթե Կալիֆորնիա նահանգն ընդունի վճարումների համակարգ, որով կպահանջվի, որ ծնողները վճարեն ապահովագրության համավճարները և մասհանումները, ապա նահանգը պետք է ընգրկի դրույթ՝ սահմանելու համար արդյոք ծնողն ի վիճակի չէ վճարել վաղ միջամտության ծառայությունների հետ կապված ծախսերը:⁹ Այն ծնողների երեխաների համար վաղ միջամտության ծառայությունները, որոնք համապատասխանում են անվճարունակության նահանգային չափորոշիչներին, չեն կարող մերժվել կամ հետաձգվել այս ծնողների՝ վաղ միջամտության ծառայությունների համար իրենց մասնավոր ապահովագրությունն օգտագործելու համար համաձայնություն չտալու պատճառով:¹⁰

Չրջանային կենտրոններին առողջապահական քարտերի տրամադրում

2009 թվականին Կալիֆորնիա նահանգն ընդունել է օրենքներ, համաձայն որոնց պահանջվում է, որ այն երեխաների ծնողները, որոնք զանհատվում են վաղ միջամտության ծառայությունների համար կամ ստանում են այն ծառայությունները, պետք է շրջանային կենտրոնին տրամադրեն առողջապահական նպաստների քարտերի պատճենները, ըստ որոնց երեխան պայմանուևակ է՝ ներառյալ մասնավոր բժշկական ապահովագրության ծրագրերը:¹¹ Սա շրջանային կենտրոններին թույլ է տալիս իմանալ, թե որքան մանուկներ և փոքր տարիքի երեխաներ ունեն նպաստներ, որոնք կարող են օգտագործվել վաղ միջամտության ծառայությունների դիմաց վճարելու համար: Սա նշանակում է, որ շրջանային կենտրոնները կարող են պարբերաբար խնդրել ծնողներին

⁹ 34 Դաշնային օրենսգրքի բաժին 303.521(ա)(3): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

¹⁰ 34 Դաշնային օրենսգրքի բաժին 303.520(գ): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

¹¹ Կառավարության օրենսգրքի բաժին 95020(բ) և (գ): ([ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ](#))

համաձայնություն տրամադրել պահանջվող ծառայությունների դիմաց վճարելու համար իրենց բժշկական ապահովագրությունն օգտագործելու համար:

Շրջանային կենտրոնը պետք է Միջոցի գրավոր ծանուցագիր ուղարկի

Եթե շրջանային կենտրոնը ցանկանում է ինչ-որ բան փոխել ձեր վաղ միջամտության ծառայություններում, այն ձեզ գրավոր ծանուցում է փոփոխությունից ողջամիտ ժամանակահատված առաջ: Ծանուցման պետք է նշվեն՝

- միջոցը, որը շրջանային կենտրոնն առաջարկում կամ մերժում է.
- ձեռնարկվող միջոցի պատճառը,
- ինչպես բողոքարկել կամ պահանջել մեդիացիայի կամ լսման պատշաճ գործընթաց,

Ծանուցումը պետք է հասկանալի լինի լայն հասարակությանը և լինի ծնողի նախընտրելի լեզվով: Տարածաշրջանային կենտրոնը պետք է այն թարգմանի և համոզվի, որ ծնողն այն հասկանում է:

Մեդիացիայի և լսման համար դիմելը

Մեդիացիայի և լսման համար դիմելու նպատակով դուք պետք է գրավոր դիմում ներկայացնեք: Եթե չեք կարող դա անել, ապա շրջանային կենտրոնը կօգնի ձեզ կազմել դիմումը: Լսման համար դիմումը ներկայացվելուց հետո Ձեր երեխան կշարունակի ստանալ ԸԾԱԾ-ում թվարկված վաղ միջամտության ծառայությունները, որոնք ներկայումս ստանում է: Նա վիճարկվող որևէ նոր ծառայություն չի ստանա, բացառությամբ դեպքերի երբ առկա է մեդիացիայի կամ լսման բարենպաստ լուծում: Ներկայացրեք լսման կամ մեդիացիայի համար դիմումը՝

Office of Administrative Hearings
Attention: Early Start Intervention Section
2349 Gateway Oaks Drive, Suite 200
Sacramento, CA 95833-4231
Ձայնային ծառայություն՝ (800) 515-2229
Ֆաքս՝ (916) 376-6318 կամ (916) 263-0549

Լսման ընթացքում դուք իրավունքներ ունեք

Դուք իրավունք ունեք՝

- Տեսնելու ձեր շրջանային կենտրոնի տվյալները
- Ներկա լինելու և բանավոր կամ գրավոր ցուցմունք տալու
- Ձեր ընտանիքի անդամները, ընկերները, թերապևտները կամ բժիշկները կարող են ներկա լինել և խոսել ձեր անունից
- Իրավաբանի կամ փաստաբանի ներկայության
- Ունենալու թարգմանիչ, եթե ձեր հիմնական լեզուն անգլերենը չէ

Պատրաստվեք Ձեր Լսմանը

- Հավաքեք տեղեկություններ, որոնց ցույց են տալիս, որ ձեզ հարկավոր են ծառայությունները, որոնք շրջանային կենտրոնը ցանկանում է փոխել: Համոզվեք, որ ձեր կողմից օգտագործվող տեղեկությունները ճշգրիտ են և մանրամասն բացատրում են ձեր կարիքները: Նաև, գտեք անձանց, ովքեր ցանկանում են գնալ ձեր լսմանը և պատմել դատավորին, թե ինչու են ձեզ ծառայություններ անհրաժեշտ: Համոզվեք, որ այս մարդիկ գիտեն ձեր կարիքները:
- Լսմանը կարող եք բերել այն փաստարկը, որ դուք իրավունք ունեք, որ ձեր կարիքները բավարարվեն՝ ձեր ԸԾԱԾ նպատակներին և խնդիրներին հասնելու համար կամ բացատրելու, թե ինչու եք դուք ըստ օրենքի համապատասխանում բացառության և ազատման պայմաններին:

Ցանկանում ենք, որ կապնվեք մեզ հետ: Խնդրում ենք լրացնել հետևյալ հարցաթերթը մեր հրատարակությունների մասին և գնահատել մեր կատարողականը: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար գնահատեք 800-776-5746 հեռախոսահամարով կամ [լրացրեք օգնության ձևը](#): Բոլոր մնացած

Էջ 8 ից 9

Նպատակներով զանգահարեք 916-504-5800 (Յյուսիսային
Կալիֆորնիա). 213-213-8000 (Յարավային Կալիֆորնիա):

*Disability Rights California-ն ֆինանսավորում է ստանում բազում
աղբյուրներից, ֆինանսավորողների ամբողջական ցանկի համար տե՛ս
[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).*